



ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՋԱՌ
ԵՎ
ՍԵՎԱԲԵՐՂ
ԳՅՈՒՂԵՐԻ
ՊԱՏՄԱԿԱՆ
ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE



ՀՏԴ 719
ԳՄԴ 79.0
Կ 294

Հեղինակ
Գիտական խմբագիր
Խմբագիր-սրբագրիչ
Համակարգչային ձևավորող
Չափագրությունների հեղինակ

Սամվել Կարապետյան
Էմմա Աբրահամյան
Հասմիկ Հովհաննիսյան
Արմեն Գևորգյան
Աշոտ Հակոբյան

Սամվել Կարապետյան
Կ 294 **Ձառ և Սևաբերդ գյուղերի պատմական հուշարձանները.** / Ս. Կարապետյան.- Եր.: ՀԵՈՒ հիմնադրամ, 2014 - 16 էջ:

Մեր երախտագիտությունն ենք հայտնում սույն գրքույկի հովանավոր հարգարժան Վարդան Հարությունյանին

Հայրենիքն անհուն նվիրումի և ոգեղենության միակ աղբյուրն է, ազգերի գոյությունն իմաստավորած գերակա արժեքը:

Հայրենիքն ակունքն է մարդուն տրված ազնվագույն և ամենից անկեղծ զգացումի՝ հայրենասիրության, որի խմորիչն էլ հայրենաճանաչությունն է:

Այո՛, սիրելու համար պետք է ճանաչել, ուստի և Հայրենիքը սիրելու համար պայման է, որ անհատը լինի հայրենաճանաչ:

Ազգերի պատմությունը ցույց է տվել, որ բազում մահաբեր խութերով դարերը պատվով են հաղթահարել այն ազգերը, որոնց հայրենաճանաչությունը բյուրեղացել և վերածվել է Հայրենիքի պաշտամունքի, որի պայմաններում

հաղթանակն ապահովված է եղել նույնիսկ անկախ ուժերի քանակական անհամաչափությունից:

Ոգեղեն արժեքներով առաջնորդվող և ըստ այդմ ուժեղ, իսկ սրանով էլ պայմանավորված՝ երջանիկ հասարակություն ունենալու համար անքննելի անհրաժեշտություն է, որ նույն հասարակության յուրաքանչյուր մասնիկը լինի հայրենաճանաչ, որն էլ բնականորեն սկիզբ է առնում հարագատ ծննդավայրի ճանաչողությունից:

Հուսով ենք, որ սույն գրքույկն իր համեստ ներդրումը կունենա մեզանում այնքան անհրաժեշտ հայրենաճանաչության խորացման գործի մեջ:

Կեցցեն մեր հայրենաճանաչ հայրենակիցները, փառք սրբազան Հայրենիքին:

ՋԱՌ ԳՅՈՒՂԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Տեղադրություն. գտնվում է Աբովյան քաղաքից 9,5 կմ արևելք՝ Ակունք և Սևաբերդ գյուղերի միջակայքում՝ Հատիս լեռան հարավային ստորոտին: Ծովի մակերևույթից բարձր է 1598-1720 մ:

Պատմություն. բնակավայրի՝ ցարդ հայտնի առաջին հիշատակությունը մ.թ.ա. Ը դարից է: Այն ներկայիս Աբովյան քաղաքի տարածքում հայտնաբերված վիմափոր սեպագիր արձանագրություն է, որը փորագրվել է Արգիշտի Ա (786-764 թթ.) թագավորի կառավարման տարիներին: Ընդ սմին՝ Ջառ


(Ծար) գյուղը շուրջ 2800 տարի առաջ Ուլուա երկրամասի վարչական կենտրոն-քաղաք էր և կրում էր Դար (Դարանե) անվանումը¹:

Գյուղում և նրա սահմաններում պահպանված պատմական տարաբնույթ հուշարձաններն ու դրանց մնացորդները փաստում են, որ իր գոյության ընթացքում բնակավայրն առավել ծաղկում և բարգավաճ չրջան է ապրել ԺԲ-ԺԳ դարերում և ինչ-որ չափով նաև մինչև ԺԷ դարը, ապա վերստին ուժ է առել ԺԷ դարի 2-րդ կեսից հետո և մասամբ նաև ԺԸ դարի ընթացքում:

Բնակչություն. ակներևաբար վաղընջական ժամանակներից ի վեր



¹ Կարագեղոզյան Յ., Սեպագիր տեղանուններ, Երևան, 1998, էջ 98-99: Տե՛ս նաև Арутюнян Н., Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001, с. 202.



Ջառ գյուղի գլխավոր հատակագիծն ըստ Google Earth (2013 թ.) արքանյակային լուսանկարի (գրաֆիկական մշակումը՝ Ա. Հակոբյանի, 2014 թ.)



Ձառ գյուղը հարավ-արևմուտքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

բնակեցված գյուղը, դատելով պահպանված նյութական մշակույթի հուշարձանների մնացորդներից, զուտ հայաբնակ է եղել մինչև 1604 թ. շահաբասյան բռնազաղթը, սակայն որոշ ժամանակ անց կրկին բնակեցվել է ինչպես արհավիրքից խույս տված և հայրենի գյուղ վերադարձած բնիկներով, այնպես էլ խամական իշխանությունների հովանավորությունը վայելող մահմեդական տարրով:

Այսուհանդերձ, գյուղի բնակչության թվաքանակի առաջին արձանագրումներն իրականացվել են Երևանի խանության տարածքը ռուսական նվաճումից հետո՝ սկսած 1831 թ.-ից:

Մինչև մեր օրերը հասնող վիճակագրական տվյալների համադրումը, որը ներկայացվում է ստորև, ցույց է տալիս, որ վերջին շուրջ երկու հարյուրամյակների ընթացքում Ձառն իր բնակչության առավելագույն ցուցանիշին (1951 շունչ) հասել է Առաջին աշխարհամարտի նախօրեին, որն այդպես մնացել է անգերազանցելի:

Հայտնի է, որ ներկայիս բնակիչների նախնիների թվում, բնիկներից զատ, կան նաև Իրանի հայաստանյան գավառներից, Սպահանից, Վանից, Մուշից, Մանազկերտից և Կոստանդնուպոլսից եկածների շառավիղները:

Ընդ որում, մինչև Մեծ եղեռնը, զուտ հայ բնակչության թվում, որն այդպես մնացել է անգերազանցելի:

տարեթիվ	հայ		թուրք		ընդամենը	
	տուն	շնչ.	տուն	շնչ.	տուն	շնչ.
1831 ²			20	89	20	98
1842 ³			41	150	41	
1869 ⁴	20					
1873 ⁵	66					
1883 ⁶	50		70		120	
1886 ⁷					113	
1893 ⁸	40	287	73		113	
1897 ⁹						1143
1906 ¹⁰	52	316	118	697	170	1013
1908 ¹¹						1033
1909 ¹²		403				
1914 ¹³						1951
1926 ¹⁴						895
1931 ¹⁵		1112		93	225	1206
1937 ¹⁶						1265
1939 ¹⁷						1299
1959 ¹⁸						847
1970 ¹⁹						976
1979 ²⁰						953
1989 ²¹						1386
2001 ²²						1386
2004 ²³						1522
2011 ²⁴		1337				1337

2 ՀԱԴ, ֆ. 90, ց. 1, գ. 93, ք. 13-15; գ. 319, ք. 10-11 շրջ. (բնակիչները մահմեդականներ էին):

3 ՀԱԴ, ֆ. 93, ց. 1, գ. 81, մաս III, ք. 1ա շրջ. (բնակիչները մահմեդականներ էին):

4 ՀԱԴ, ֆ. 56, ց. 12, գ. 42, ք. 3:

5 ՀԱԴ, ֆ. 93, ց. 1, գ. 195, ք. 3:

6 «Մշակ», 1883, № 163, էջ 1-2:

7 ՀԱԴ, ֆ. 93, ց. 1, գ. 195, ք. 3:

8 **Էփրիկյան Ս.**, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, Խ. Ա. Վենետիկ, 1903-1905, էջ 707:

9 Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարան, Երևան, 2008, էջ 76:

10 Памятная книжка Эриванской губернии на 1908 год, отд. III, Эривань, 1908, с. 4-5. Հայերից զատ՝ գյուղն ունեցել է 118 տուն (697 շունչ) քաղաք բնակիչ:

11 Кавказский календарь на 1910 г., Тифлис, 1909, отд. IV, с. 255.

12 ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, գ. 764, ք. 284: Տե՛ս նաև ֆ. 48, ց. 1, գ. 299, ք. 3 շրջ.:

13 Кавказский календарь на 1915 г., Тифлис, 1914, отдел статистический, с. 125.

14 ՀՀ բնակավայրերի բառարան, էջ 76:

15 ՀՄԽՀ բնակավայրերի ցուցակ. բնակավայրերն ու ագագարակությունը, Երևան, 1936, էջ 38 (ի դեպ, 1206 շնչից 1112-ը հայեր էին, 93-ը՝ թուրք, 1-ը՝ ռուս):

16 ՀԱԴ, ֆ. 163, ց. 23, գ. 141, ք. 24:

17 ՀՀ բնակավայրերի բառարան, էջ 76:

18 Նույն տեղում:

19 Նույն տեղում:

20 Նույն տեղում:

21 Նույն տեղում:

22 Նույն տեղում (որից՝ 705 ար., 681 իգ.):

23 Նույն տեղում:

24 ՀՀ 2011 թ. մարդահամարի արդյունքները. Կոտայքի մարզ, Երևան, 2013, էջ 10:

օրինակ, 1880-ական թթ. գյուղաբնակների թվում գերակշռում էին պարսկահայ գավառներից փոխադրվածները, որոնց մասին մի առիթով նշվել է. «Ձառ գիւղը, որ պատկանում է Ձ. և Ա. Մագաշեանցներին..., ունի 120 տուն բնակիչներ, որոնցից 50 տուն հայ-լուսաւորչականներ են և 70 տուն թուրքեր: Այդ 50 տուն հայ բնակիչները Պարսկաստանի հայ գաղթականներիցն են և շատ աշխատասեր և խելոք ժողովուրդ են, չը նայելով դրանց սակաւթիւ լինելուն, մեծ օգուտ են տա-




Մր. Կարապետ եկեղեցին հյուսիս-արևելքից և հարավից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

լիս իրանց գիղատերերին: Բայց վերո-
յիշեալ գիղի բնակիչները անբաւա-
կան են գիղատերերից և մանաւանդ
այդ վերջինների ծառաներից, որոնք
անգութ կերպով են վարվում գիղացի-
ների հետ: Այդ գիղը վարչութեան կող-
մից նոյնպէս վատ դրութեան մէջ է
գտնվում, որովհետեւ գիղի սուղիան և
տանուտերը փոքր ռոճիկներ ստանա-
լով և շատ չքաւոր դրութեան մէջ
գտնվելով, ստիպված են իրանց կոչ-
մանը անյարմար գործերով զբաղվել:
Զառ գիղը ուսումնարան չունի»²⁵:

Ինչ վերաբերում է կրթական ոլոր-
տին, ապա Զառն իր դպրոցն ունենում
է միայն խորհրդային կարգերի հաս-
տատումից հետո:

Սր. Կարապետ եկեղեցի. շուրջ յո-
թուկեսդարյա պատմություն ունեցող և
այդ ընթացքում բազմիցս վերակա-
ռուցված և նույնիսկ հիմնավերակա-
ռուցված եկեղեցին ցարդ պահպանել է
առաջին օծմամբ տրված Սր. Կարա-
պետ անունը: Ընդ որում, նախնական
կառույցի մասին գոնե մասնակի
պատկերացում կարելի է կազմել շի-
նարարական արձանագրություն ունե-
ցող բարավորից (1271 թ.), որից իմաց-
վում է երբեմնի եկեղեցու մուտքի լայ-
նությունը (105 սմ): Ինչ վերաբերում է
բուն կառույցի հորինվածքին, ապա ա-



Սր. Կարապետ եկեղեցու հատակագիծը (չափ.՝ Ա. Հակոբ-
յանի, 2014 թ.)


25 «Մշակ», 1883, № 163, էջ 1-2:



Սր. Կարապետ եկեղեցու ներքին տեսքը դեպի արևելք
(լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

ռավել հավանական է, որ այն միջին
չափի միանավ բազիլիկ եղած լիներ,
որպիսիք լայն տարածում էին գտել
հատկապես ԺԳ դարում:

Մինչ ԺԹ դարի վերջին իրականաց-
ված վերաշինությունը հնավանդ այս
եկեղեցու մասին միայն մեկ՝ 1883 թ.



Սր. Կարապետ հին եկեղեցու մուտքի վերակազմությունը
(չափ.՝ Ա. Հակոբյանի, 2014 թ.)

վերաբերող վկայություն ենք գտնում,
այն էլ խիստ ժլատ նկարագրությամբ.
«...միայն մեկ հին եկեղեցի ունի, որի
մէջ միայն ամիսը երեք կամ չորս ան-
գամ է լինում ժամասացութիւն, չը նա-
յելով, որ քահանան շատ խելոք և գո-
վելի բարք ու վարքի տէր մարդ է»²⁶:

Հնի տեղում և մասամբ նաև նրա
քարերով որպես եռանավ բազիլիկ
հիմնավերակառուցված եկեղեցու խո-
րանում՝ հարմարեցված որպես սեղա-

26 Նույն տեղում:




Սր. Կարապետ հին եկեղեցու բարավորը, 1271 թ. (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)



Մր. Կարապետ եկեղեցու որմնեղանակում և բակում գտնվող խաչքարեր, ԺԳ-ԺԸ դդ. (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

նի վեմ-քար, պահպանվել է նախկին եկեղեցու շինարարական 7 տողանի թվակիր արձանագրությունը, որը փորագրված է հնամենի եկեղեցու բարավորին և ավանդում է հետևյալը.

[Կամաւ աստուծոյ շի]նեցաք ս(ուր)ք Կա[ր]/ապետին, տվաք հոգո մասն հալալ յնչից մեր/ոց, եւ սպասաւորքս սահմա/նեցին ի տարոջն Բ (2)



Մր. Կարապետ եկեղեցուց հյուսիս-արևելք գտնվող գերեզմանոցը և խաչքարեր, ԺԳ-ԺԸ դդ. (լուս.՝ Մ. Կարապետյանի, 2014 թ.)

պատարա/գել գԲ(րիստո)սէ տնաւրի-նեաց .../րն, ի թվ(ին) ՉԻ (1271):

Ծխական Մր. Կարապետ եկեղեցին գործել է մինչև 1920-ական թթ. սկզբները (ծխամատյաններից մեկում հիշվում է օրինակ 1909 թ.)²⁷:

Վերջին անգամ եկեղեցին նորոգվել է 1977-1978 թթ.: Այդ մասին ավանդող արձանագրությունը՝ փորագրված երկու քարերին, ագուցված է հարավային

²⁷ ՀԱԴ, ֆ. 48, ց. 1, գ. 299, ք. 3 շրջ.:

ճակատից բացված լուսամուտի ստորին մասում.

Ջառի / Մ. Կարապետ / եկեղեցին / վերանորոգել / են 1977 թ. / Գեղամ / Կոստանդյան Կ.: // Վանքս / նորոգվեց / հավատացյալներով, / Մ. Կարապետ, / 1978:



Մանր անմշակ քարով և կրաշաղախով կառուցված համանուն նոր եկեղեցու որմերում (հատկապես ներքուստ) ագուցվել են գեղաքանդակ մի քանի խաչքարեր: Առանձնապես արժեքավոր են բեմառաջին գետեղված միևնույն գեղաքանդակ խաչքարի երկատված մեծադիր բեկորները (ԺԳ դար):

Գերեզմանոց. Ջառ գյուղի տարածքում հին գերեզմանոցները երկուսն են: Դրանցից մեկը գտնվում է գյուղի հյուսիսարևելյան կողմում՝ Սբ. Կարապետ եկեղեցուց ոչ հեռու: Այստեղ պահպանվել են խիտ թաղումներով ԺԲ-ԺԹ դարերի ժամանակագրական ընդգրկումով ավելի քան 400 անմշակ և կիսամշակ, ինչպես նաև մի քանի տասնյակ ուղղանկյունաձև մշակված տապանաքարեր:

Երկրորդ գերեզմանոցը գտնվում է գյուղամիջում՝ գյուղ մտնող մայրուղու ձախ եզրին: Ի դեպ, ինչպես վկայվել է 1947 թ., մասամբ նաև հենց այս ճանապարհի կառուցման հետևանքով էլ գերեզմանոցը մասնակիորեն վնասվել էր. «...գերեզմանոցի եզրերից քանդել են ճանապարհաշինության և բնակարանաշինության պատճառով»²⁸:



Ջառի գյուղամիջյան գերեզմանոցն ու տեղում պահպանված միակ խաչքարը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

Նույն թվականին տեղում վկայվել են 1691 թ. արձանագիր մի տապանաքար և ԺԳ-ԺԷ դարերի խաչքարեր, որոնք ցավալիորեն չեն հասել մեր օրերը:



Ջառի միջնադարյան շրջանի պատմության ուսումնասիրության առումով առանձնապես զգալի է այս գերեզմանոցում վկայված 1286 և 1306 թթ. արձանագրություններով երկու խաչքարերի անհետացումը, որոնց վիմագրերը բարեբախտաբար ժամանակին ընդօրինակվել են.

Խաչքար գյուղի գերեզմանոցում.

*ԹՎԻՆ ՉՀԵ (1286), ես՝ Մամքոս, կանգնեցի զխաչս, յիշեցեք*²⁹:

Խաչքար գյուղի գերեզմանոցում.

*ԹՎԻՆ ՉԾԵ (1306), կամաւն աստուծոյ մեք՝ Շայճնայս եւ Սարգիս, կանգնեցաք զխաչս ի Քրիստոս, ամէն*³⁰:

Ներկայումս այս գերեզմանոցում դեռևս պահպանվում են ԺԷ-ԺԸ դարերին վերաբերող բազմաթիվ սալատապաններ և մեկ պարզ խաչքար, ինչպես նաև ԺԹ-Ի դարերի հանգուցյալների հիշատակին կերտված մի քանի տասնյակ ուղղանկյունաձև տապանաքարեր (վերջիններիս թվում առկա են նաև արձանագիրներ):

²⁸ ՀԱԴ, ֆ. 1063, ց. 1, գ. 1403, ք. 5:

²⁹ ՀԱԴ, ֆ. 1063, ց. 1, գ. 1320, ք. 17: Տե՛ս նաև գ. 1329, ք. 87:

³⁰ Նույն տեղում:

Նմանատիպ մի խաչքար էլ պահպանվել է գյուղի արևելյան կողմում՝ ճամփեզրին:

Ձիթհան. 1760-ական թթ. Ջառ գյուղում (հիշատակության մեջ Ծար անվանաձևով) եղել է Գեղարդավանքին պատկանող մի ձիթհան³¹:

ՍԵՎԱԲԵՐԴ ԳՅՈՒՂԻ
ՊԱՏՄԱԿԱՆ
ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Տեղադրություն. գտնվում է Աբովյան քաղաքից 14,6 կմ արևելք՝ Գեղամա լեռնաշղթայի արևմտյան ստորոտին: Ծովի մակերևույթից բարձր է 2035-2080 մ:

Անվանում. գյուղի հայկական (պատմական) անվանումը 1604 թ. տեղի ունեցած բնիկների անվերադարձ բռնագաղթի հետևանքով, ցավոք, մոռացության է մատնվել, որը և չի փոխանցվել նաև եկվոր այլազգիներին: Նրանք, տպավորված գյուղամերձ ամրոցի՝ հատկապես գյուղահայաց՝ հյուսիսային որմի մոայլ գույներից (բերդի այս որմը տարվա ընթացքում ամենաքիչն է լուսավորվում), գյուղը կոչել են «Ղարաղալ» (թարգմ.՝ սև բերդ), որն էլ 1948 թ. պաշտոնապես վերանվանվել է Սևաբերդ:

Պատմություն. գյուղում կամ գյուղամերձ գտնվող պատմական հուշարձանները փաստում են, որ բնակավայրը գոյություն է ունեցել ոչ թե դարեր, այլ նույնիսկ հազարամյակներ առաջ: Համենայն դեպս, գյուղին հարավ-արևմուտքից կից պաշտպանական հզոր համակարգը նախաուրարտական ժամանակաշրջանից ավանդված եզակի հուշարձան է, իսկ եկեղեցու և գերեզ-

մանոցի մնացորդներն էլ վկայում են զարգացած միջնադարում գյուղի ծաղկուն վիճակի մասին:

Բնակչություն. դարձյալ պահպանված հուշարձանների մնացորդներից դատելով՝ ակներև է, որ գյուղը զուտ հայաբնակ էր մինչև 1604 թ. շահաբասյան բռնագաղթը, որից հետո ամալացել է: Որոշ ժամանակ անց (թերևս ԺԷ դարի վերջին կամ ԺԸ դարում) խանական իշխանությունների հովանավորությամբ հայաթափ գյուղատեղիում հաստատվել են թյուրքական ծագմամբ մահմեդական խաշնարած ցեղեր:

Թվում է, թե գյուղի ժողովրդագրական այսօրինակ պատկերն անփո-

տարեթիվ	հայ		թուրք		ընդամենը	
	տուն	շնչ.	տուն	շնչ.	տուն	շնչ.
1842 ³¹			12			
1859 ³²			32	238	32	238
1873 ³³						403
1897 ³⁴						599
1926 ³⁵						343
1931 ³⁶		374		60	93	434
1937 ³⁷						615
1939 ³⁸						720
1959 ³⁹		503				503
1970 ⁴⁰		655				655
1979 ⁴¹		393				393
1989 ⁴²		305				305
2001 ⁴³		361				361
2004 ⁴⁴		280				280
2011 ⁴⁵		211				211

Եկեղեցի. գտնվելիս է եղել գյուղի հյուսիսարևելյան կողմի բլրի վրա՝ շրջապատված միջնադարյան գերեզմանոցով: Արդեն կիսավեր եկեղեցին հիմնահատակ քանդում են 1920-1930-ական թթ., իսկ քարերի հիմնական

փոխ պահպանվել է մինչև 1905-1907 թթ. հայ-թաթարական (թրքական) ընդհարումները: Դրանից և էլ առավել 1915 թ.-ից հետո գյուղում բնակություն են հաստատում Արևմտյան Հայաստանում իրականացված հայերի ցեղասպանությունից հրաշքով ողջ մնացած սակավաթիվ հայեր՝ փոխադրված Մուշից, Բասենից, Բուլանղլի Ատկոն գյուղից և այլն:

Ուղիղ 170 տարիների ընթացքում (1842-2012 թթ.) Սևաբերդի բնակչության թվաքանակն արձանագրած վիճակագրական տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

մասը՝ յուրացնում որպես շինանյութ⁴⁶: Սրանով հանդերձ՝ ցարդ տեղում պահպանված ճարտարապետական մի քանի բեկորներ թույլ են տալիս

31 ՀԱԴ, ֆ. 93, ց. 1, գ. 81, մաս III, ք. 1ա շրջ. (արձանագրված է միայն արական բնակչությունը՝ 32 շունչ):
32 ՀԱԴ, ֆ. 267, ց. 1, գ. 13, ք. 343-348 (որից՝ 129 ար. և 109 իգ.):
33 Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարան, Երևան, 2008, էջ 178:
34 Նույն տեղում:
35 Նույն տեղում:
36 ՀՄԽՀ բնակավայրերի ցուցակ. բնակավայրերն ու ազգաբնակչությունը, Երևան, 1936, էջ 39:

37 ՀԱԴ, ֆ. 163, ց. 23, գ. 141, ք. 25 (որից՝ 282 ար. և 333 իգ.):
38 ՀՀ բնակավայրերի բառարան, նույն տեղում:
39 Նույն տեղում:
40 Նույն տեղում:
41 Նույն տեղում:
42 Նույն տեղում:
43 Նույն տեղում (որից՝ 169 ար. և 192 իգ.):
44 Նույն տեղում:
45 ՀՀ 2011 թ. մարդահամարի արդյունքները. Կոտայքի մարզ, Երևան, 2013, էջ 10:
46 ՀԱԴ, ֆ. 1063, ց. 1, գ. 1403, ք. 5:

31 Միմոն կաթողիկոս Երևանցի, Ջամբո, Երևան, 2003, էջ 385:



Սևաբերդ գյուղը հյուսիս-արևելքից և հարավ-արևելքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)



գոնե մոտավոր պատկերացում կազմել երբեմնի եկեղեցու ընդհանուր նկարագրի վերաբերյալ: Ընդ որում (թերևս միանավ), եկեղեցին կառուցված է եղել համակ սրբատաշ քարով, կրաշաղախով: Երեսապատի քարերին ունեցել է նվիրատվական բնույթի բազմաթիվ խաչաքանդակներ: Խաչազարդված է եղել նաև եկեղեցու բարավորը (կենտրոնականը՝ հավասարաթև հորինվածքով): Բոլոր խաչաքանդակները կրում են ԺԳ դարին և առանձնապես նրա երկրորդ կեսին բնորոշ ոճական և գեղարվեստական առանձնահատկու-

թյուններ, ըստ որի էլ մեզ թույլ ենք տալիս երբեմնի կառույցը վերագրել նշյալ ժամանակաշրջանին:

Գերեզմանոց. տարածված է նույն բլրի բարձրության վրա, որտեղ գտնվում են անհետացված եկեղեցու մի քանի բեկորներ, և պարունակում ավելի քան միջնադարյան 150 թաղումներ: Պահպանված գերեզմանական հուշարձանների թվում առկա են ինչպես մի քանի տասնյակ անմշակ սալատապաններ, այնպես էլ շուրջ երկու տասնյակ մեծ մասամբ գեղաքանդակ, սակայն անարձանագիր ու նաև ան-



Նկեղեցու՝ որպես տապանաքար յուրացված խաչազարդ բարավորը և սրբատաշ երեսապատի խաչաքանդակ բեկորներ գերեզմանոցի տարածքում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)



Հատվածներ գերեզմանոցից և խաչքարեր (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

խտիր և միտումնավոր տեղահան արված, կոտրատված, ԺԳ-ԺԶ դարերին բնորոշ ոճական և գեղարվեստական առանձնահատկություններով խաչքարեր:


Նորահայտ խաչքար. 2013 թ.՝ գյուղի հյուսիսարևմտյան եզրին հողային աշխատանքների ժամանակ, սևաբերդցի Դավիթ Աբրահամյանը հայտնաբերում է մի խաչքար, որը, ըստ ոճական և գեղարվեստական առանձնահատկությունների, վերաբերում է ԺԳ-ԺԵ դարերին:



Սևաբերդ (Ղարաղալա) ամրոց. գտնվում է գյուղի հարավարևմտյան եզրին՝ ընդարձակ մարգագետիններով մեկուսացած քարակարկառուտի կենտրոնում՝ ոչ բարձր բլրագագաթին:

Հատակագծում բերդն անկանոն քառանկյուն է: Ունի 4 մ լայնություն, առանց շաղախի և անմշակ քարով հզոր շրջապարիսպ (100 x 86 մ), որի կենտրոնում տեղադրված է միջնաբերդը (56 x 44 մ):

Ինչպես գլխավոր շրջապարսպի, այնպես էլ միջնաբերդի դարպասները բացված են արևելյան որմերից:



Նորահայտ խաչքար (ԺԳ-ԺԵ դդ.) և Սևաբերդ ամրոցի հատակագիծը (չափ.՝ Ա. Հակոբյանի, 2014 թ.), տեսարաններ հյուսիսից և հարավ-արևմուտքից (լուս.՝ Ս. Նարայետյանի, 2014 թ.)



Հատվածներ Մհարերդ ամրոցից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)



Սևաբերդից հարավ-արևելք՝ Գեղամա լեռնաշղթայի արևմտահայաց փեշերին (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2009 թ. հունիս և 2013 թ. սեպտեմբեր)



Ակնա լիճը Մաաբերդից արևելք՝ Գեղամա լեռնաշղթայի ջրբաժան գոտում, 3038 մ (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2009 թ. հունիս և 2013 թ. սեպտեմբեր)



Գեղամա լեռնաշղթայի ամենաբարձր գագաթը՝ Աժդահակ լեռը (3598 մ) հյուսիսից և խառնարանը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2009 թ. հունիս և 2013 թ. սեպտեմբեր)





Յուրաքանչյուր ազգի պատվաբեր պարտքն է ճանաչել հարազատ օրրանը և ուսումնասիրել Հայրենիքում արարված նախնյաց հիշատակները:

Հայոց Հայրենիքում պատմական հուշարձանները հազարամյակների ընդգրկում ունեն և անհամբեղի քանակով ու մեծ խտությամբ տեղաբաշխված են Հայկական ողջ բարձրավանդակում:

Ի տարբերություն բազում ազգերի, որոնցից յուրաքանչյուրն իրականացնում է հայրենի նյութական մշակույթի հուշարձաններին առնչվող ուսումնասիրական տարաբնույթ աշխատանքներ և լուծում նաև դրանց պահպանության խնդիրները, մեր պարագայում նույնն անելու հնարավորությունը հիմնականում սահմանափակված է Հայոց Հայրենիքի՝ սոսկ հայկական պետականության սահմանների ներքո գտնվող տարածքում, ինչպես նաև որոշ պատմական գաղթավայրերում: Այսինքն՝ պատմական անցքերի բերումով հայ ազգի ներկա սերնդին է ժառանգվել մի իրականություն, որն էապես տարբերվում է շատ ու շատ ազգերի առջև նույն ոլորտում ծառացած խնդիրներից:

Այո՛, հեշտ չէ նախնյաց հիշատակներին հետամուտ լինել մանավանդ ցեղասպանության ճանապարհով Հայրենիքիդ տիրացած օտար պետության տարածքում:

Հայրենիքը, անկախ նրա բռնազավթված կամ ազատագրված լինելու իրողությունից, սրբազան է, որտեղ պատմական հուշարձաններն էլ հավաքական առումով Երկիր մոլորակի տվյալ հատվածը հայ ազգին ի բնե վերապահված լինելու մասին ազդարարող «գրանցման վկայականներ» են, որոնք իրենց իսկ գոյությամբ էլ մատնում են պատմական իրականությունը և դրանով անհանգստություն պատճառում որոշ զավթիչ հարևանների:

Ահա այս ըմբռնումների և պարտականությունների գիտակցման թելադրանքով էր, որ սկսած 1969 թվականից՝ ճարտարապետ Արմեն Հախնազարյանը լծվում է Արևմտյան

Հայաստանի և Կիլիկիայի պատմական հուշարձանների փաստագրման գործին և ժամանակի ընթացքում առաջ մղելով աշխատանքները՝ 1982 թ. Գերմանիայի Աախեն քաղաքում հիմնում «Հայկական ճարտարապետությունը ուսումնասիրող» հասարակական կազմակերպությունը:

Տարեցտարի լայնացնելով իրականացվող աշխատանքների ծավալները՝ արդեն 1996 թ. կազմակերպությունը պաշտոնական գրանցում է ստանում ԱՄՆ-ում (Լոս Անջելես), իսկ 1998 թ.՝ նաև Հայաստանի Հանրապետությունում (Երևան): Վերջինս նախ 2000 թ. վերագրանցվում է, իսկ 2010 թ., անփոփոխ պահելով անվանումը, վերակազմավորվում որպես հիմնադրամ:

45-ամյա գործունեության ընթացքում (1969-2014) հիմնադրամն իրականացրել է շուրջ 240 գիտարշավներ դեպի Պատմական Հայաստանի տարբեր շրջաններ, գավառներ և պատմական գաղթավայրեր:

Ստեղծվել է արդեն 400.000 միավորի սահմանագծին մոտեցող թվայնացված պատկերների շտեմարան, որի մաս են կազմում մի քանի հազար չափագրություններ, գրաֆիկական և քարտեզագրական նյութեր:

Ստեղծվել է նաև բնակավայրերի պատմությանն առնչվող տվյալների հատուկ շտեմարան, որն արդեն իսկ հնարավորություն է ընձեռում հյուսելու Մեծ և Փոքր Հայքերի տարածքում գտնվող ցանկացած բնակավայրի պատմությունը:

ՀՃՈԻ հիմնադրամը, սկսած 1997 թ.-ից, ձեռնամուխ է եղել ավարտված ուսումնասիրությունների հրապարակման գործին, որով և անցած տարիներին լույս են ընծայվել ավելի քան 60 միավոր գրքեր, գրքույկներ, քարտեզներ և տպագիր այլ նյութեր:

2006 թ.-ից ի վեր հիմնադրամը ստեղծում է նաև վավերագրական ֆիլմեր:

Ինչպես հրատարակությունները, այնպես էլ վավերագրական ֆիլմերը զետեղված են համացանցում:

Գրքի ստեղծման և տպագրության հովանավոր ՎԱՐԴԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

<http://www.armenianarchitecture.am>

<http://www.raa.am>

RAA Armenia

raayer@sci.am

(37410) 52 15 25

Տպագրված է «Բյուրակն» հրատարակչատանը
ԵՐԵՎԱՆ
ՀՃՈԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ
2014